# ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Ք.Երևան «01» Հունիսի 2010թ.

«Էդիթ Պրինտ» ՍՊԸ , այսուհետ՝ «Հրատարակիչ», ի դեմս տնօրեն Արթուր Գալստյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և Նվեր Անդրանիկի Վիրաբյանը (անձնագիր AK 0480412 տրված 08.04.2010թ. 009-ի կողմից), Այսուհետ՝ «Հեղինակ», , մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. Պայմանագրի առարկան

1.1. Հեղինակը ստանձնում է իրականացնել սույն պայմանագրին կից «Հավելված 1 ում» նշված «Հայ դասական գրողներ» գրքերի շարքի, այսուհետ՝ «Ստեղծագործություն», թվանդակության կազմման և մշակման աշխատանքները:

1.2. Հրատարակիչը ստանձնում է իրականացնել պայմանագրի առարկայի հրատարակման և իրացման աշխատանքները:

1.3. Հեղինակը Հրատարակչին է փոխանցում Ստեղծագործության օգտագործման բացառիկ իրավունք, հետևյալ ձևերով՝

- 1.3.1. Ստեղծագործության վերարտադրում (վերարտադրության իրավունք),
- 1.3.2. Ստեղծագործության նմուշների տարածում ցանկացած ձևով՝ վաճառք, նվիրատվություն և այլն (տարածման իրավունք),
- 1.3.3. Տարածման նպատակով Ստեղծագործության նմուշների արտահանում (արտահանման իրավունք),
- 1.3.4. Ստեղծագործության թարգմանում (թարգմանության իրավունք),
- 1.3.5. Ստեղծագործության ձևափոխում կամ այլ կերպ վերամշակում, այդ թվում նաև էլեկտրոնային տարբերակով (վերամշակման իրավունք),
- 1.3.6. Ինտերնետ ցանցով ցուցադրում և վաճառք (Ինտերնետ ցանցով ցուցադրման և վաճառքի իրավունք):

## 2. Իրավունքի հանձնման ժամկետը

Սույն պայմանագրի 1-ին կետում նշված իրավունքները Հեղինակի կողմից փոխանցվում են Հրատարակչին 20 (քսան) տարի ժամկետով՝ սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից:

## 3. Իրավունքի կիրառման տարածքը

Սույն պայմանագրի համաձայն, Հրատարակիչը իրավունք ունի իրեն հանձնված իրավունքները օգտագործել ՀՀ տարածքում և դրանից դուրս:

## 4. Պայմանագրի գինը

4.1. Սույն պայմանագրի 1-ին կետում նշված ցանկացած, մի քանի կամ բոլոր ձևերով ստեղծագործության օգտագործման համար Հրատարակիչը պարտավորվում է Հեղինակին վճարել վարձատրություն՝ հեղինակային աշխատանքների հոնորար, 300.000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ հարկերը:

4.2. Վճարումը կատարվում է սույն պայմանագրի ուժի մեջ մտնելուց 30 աշխատանքային օր հետո:

## 5. Կողմերի պարտավորությունները

5.1. Հրատարակիչը պարտավոր է՝

- 5.1.1. պայմանագրի առարկային վերաբերող պահանջները և չափանիշները ժամանակին ներկայացնել Հեղինակին,
- 5.1.2. իրականացնել Հեղինակի առեղծած պայմանագրի առարկային առնչվող տնտեսական, տեխնիկական, արտադրական և կազմակերպչական խնդիրների լուծումը:

5.2. Հեղինակը պարտավոր է՝

5.2.1. սույն պայմանագրին համապատասխան կատարել պայմանագրի առարկայի առնչվող հեղինակային պարտականությունները,

5.2.2. պայմանագրի առարկայի նյութերը (ձեռագրերը, սևագրերը, դիսկետները և այլն) /գույքային բացառիկ իրավունքները/ ամբողջությամբ հանձնել Հրատարակչին,

5.2.3. Հրատարակչի պահանջով, տպագրված նյութերում վերջինիս կողմից հայտնաբերված թերությունները վերացնել 3 օրվա ընթացքում:

## 6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Կողմերից որևէ մեկը պայմանագրի պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում պարտավոր է մյուս կողմին փոխհատուցել պատճառված վնասները:

6.2. Կողմերի միջև առաջացած և սույն պայմանագրով չկարգավորված վեճերը լուծվում են ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենքով և այլ իրավական ակտերով:

6.3. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, 2 (երկու) օրինակից՝ յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ:

6.4. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

6.5. Հետագայում բոլոր փոփոխությունները և լրացումները կատարվում են գրավոր, և հանդիսանում են սույն պայմանագրի անբաժանելի մասը:

## 7. Կողմերի իրավաբանական հասցեները

*Հրատարակիչ*

«Էդիթ Պրինտ» ՍՊԸ
Ք.Երևան, Թումանյան 12 բն.3
ՀՎՀՀ 00009253
ՀՀ 16600 00243060100
«Պրոմեթեյ բանկ» ՍՊԸ

Տնօրեն ____ Ա.Գալստյան

*Հեղինակ*

Նվեր Անդրանիկի Վիրաբյան
ք.Երևան,Ավանեսովի 6շ. բն.5
անձն. AK 0480412
տրված 08.04.2010թ. 009-ի կողմից

Հեղինակ ____ Ն.Վիրաբյան

Հավելված 1
01. Հունիսի 2010թ.

| ՀՀ | Գրքի անվանումը |
|---|---|
| 1 | Հայ դասական գրողներ Խաչիկ Դաշտենց |
| 2 | Հայ դասական գրողներ Ավետիք Իսահակյան |
| 3 | Հայ դասական գրողներ Գաբրիել Սունդուկյան |
| 4 | Հայ դասական գրողներ Գրիգոր Զոհրապ |
| 5 | Հայ դասական գրողներ Գուրգեն Մահարի |
| 6 | Հայ դասական գրողներ Կոստան Զարյան |
| 7 | Հայ դասական գրողներ Համո Սահյան |
| 8 | Հայ դասական գրողներ Լևոն Շանթ |
| 9 | Հայ դասական գրողներ Խաչատուր Աբովյան |
| 10 | Հայ դասական գրողներ Հովհաննես Շիրազ |
| 11 | Հայ դասական գրողներ Հովհաննես Թումանյան |
| 12 | Հայ դասական գրողներ Հրանտ Մաթևոսյան |
| 13 | Հայ դասական գրողներ Մեսրոպ Մաշտոց |
| 14 | Հայ դասական գրողներ Մխիթար Գոշ |
| 15 | Հայ դասական գրողներ Մովսես Խորենացի |
| 16 | Հայ դասական գրողներ Նահապետ Քուչակ |
| 17 | Հայ դասական գրողներ Նարեկացի |
| 18 | Հայ դասական գրողներ Ներսես Շնորհալի |
| 19 | Հայ դասական գրողներ Սայաթ-Նովա |
| 20 | Հայ դասական գրողներ Վարդան Այգեկցի |
| 21 | Հայ դասական գրողներ Պետրոս Դուրյան |
| 22 | Հայ դասական գրողներ Ռափայել Պատկանյան |
| 23 | Հայ դասական գրողներ Սիլվա Կապուտիկյան |
| 24 | Հայ դասական գրողներ Ստեփան Զորյան |
| 25 | Հայ դասական գրողներ Վահան Թոթովենց |
| 26 | Հայ դասական գրողներ Վահան Տերյան |
| 27 | Հայ դասական գրողներ Վիլյամ Սարոյան |
| 28 | Հայ դասական գրողներ Րաֆֆի |

*Հրատարակիչ*

«Էդիթ Պրինտ» ՍՊԸ
Ք.Երևան, Թումանյան 12 բն.3
ՀՎՀՀ 00009253
ՀՀ 16600 00243060100
«Պրոմեթեյ բանկ» ՍՊԸ

Տնօրեն Ա.Գալստյան

*Հեղինակ*

Նվեր Անդրանիկի Վիրաբյան
ք.Երևան,Ավանեսովի 6շ. բն.5
անձն. AK 0480412
տրված 08.04.2010թ. 009-ի կողմից

Հեղինակ Ն.Վիրաբյան

# ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

<u>Ք.Երևան</u> <u>«01» Մարտի 2011թ.</u>

«Էլիթ Պրինտ» ՍՊԸ, այսուհետ «Հրատարակիչ», ի դեմս տնօրեն Արթուր Գալստյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և Նվեր Անդրանիկի Վիրաբյանը (անձնագիր AK 0480412 տրված 08.04.2010թ. 009-ի կողմից), Այսուհետ «Հեղինակ», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. Պայմանագրի առարկան

1.1. Հեղինակը ստանձնում է իրականացնել սույն պայմանագրին կից «Հավելված 1-ում» նշված «Գիտակնության թրեստոմատիա» գրքերի շարքի, <u>այսուհետ</u> «Ստեղծագործություն», բովանդակության կազմման և մշակման աշխատանքները:

1.2 Հրատարակիչը ստանձնում է իրականացնել պայմանագրի առարկայի հրատարակման և իրացման աշխատանքները:

1.3. Հեղինակը Հրատարակչին է փոխանցում Ստեղծագործության օգտագործման բացառիկ իրավունք, հետևյալ ձևերով՝

- 1.3.1. Ստեղծագործության վերարտադրում (վերարտադրության իրավունք),
- 1.3.2. Ստեղծագործության նմուշների տարածում ցանկացած ձևով՝ վաճառք, նվիրատվություն և այլն (տարածման իրավունք),
- 1.3.3. Տարածման նպատակով Ստեղծագործության նմուշների արտահանում (արտահանման իրավունք),
- 1.3.4. Ստեղծագործության թարգմանում (թարգմանության իրավունք),
- 1.3.5. Ստեղծագործության ձևափոխում կամ այլ կերպ վերամշակում, այդ թվում նաև էլեկտրոնային տարբերակով (վերամշակման իրավունք),
- 1.3.6. Ինտերնետ ցանցով ցուցադրում և վաճառք (Ինտերնետ ցանցով ցուցադրման և վաճառքի իրավունք):

## 2. Իրավունքի հանձնման ժամկետը

Սույն պայմանագրի 1-ին կետում նշված իրավունքները Հեղինակի կողմից փոխանցվում են Հրատարակչին 20 (քսան) տարի ժամկետով՝ սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից:

## 3. Իրավունքի կիրառման տարածքը

Սույն պայմանագրի համաձայն, Հրատարակիչը իրավունք ունի իրեն հանձնված իրավունքները օգտագործել ՀՀ տարածքում և դրանից դուրս:

## 4. Պայմանագրի գինը

4.1. Սույն պայմանագրի 1-ին կետում նշված ցանկացած, մի քանի կամ բոլոր ձևերով ստեղծագործության օգտագործման համար Հրատարակիչը պարտավորվում է Հեղինակին վճարել վարձատրություն՝ հեղինակային աշխատանքների դիմաց, 400.000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ հարկերը:

4.2. Վճարումը կատարվում է սույն պայմանագրի ուժի մեջ մտնելուց 30 աշխատանքային օր հետո:

## 5. Կողմերի պարտավորությունները

5.1. Հրատարակիչը պարտավոր է՝

- 5.1.1. պայմանագրի առարկային վերաբերող պահանջները և չափանիշները ժամանակին ներկայացնել Հեղինակին,
- 5.1.2. իրականացնել Հեղինակի ստեղծած պայմանագրի առարկային առնչվող տնտեսական, տեխնիկական, արտադրական և կազմակերպչական խնդիրների լուծումը:

5.2. Հեղինակը պարտավոր է՝

5.2.1. սույն պայմանագրին համապատասխան կատարել պայմանագրի առարկայի ստեղծման հեղինակային պարտականությունները,

5.2.2. պայմանագրի առարկայի նյութերը (ձեռագրերը, սևագրերը, դիսկետները և այլն) /գույքային բացառիկ իրավունքները/ ամբողջությամբ հանձնել Հրատարակչին,

5.2.3. Հրատարակչի պահանջով, տրամադրված նյութերում վերջինիս կողմից հայտնաբերված թերությունները վերացնել 3 օրվա ընթացքում:

## 6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Կողմերից որևէ մեկը պայմանագրի պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում պարտավոր է մյուս կողմին փոխհատուցել պատճառված վնասները:

6.2. Կողմերի միջև առաջացած և սույն պայմանագրով չկարգավորված վեճերը լուծվում են ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենքով և այլ իրավական ակտերով:

6.3. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, 2 (երկու) օրինակից՝ յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ:

6.4. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

6.5. Հետագայում բոլոր փոփոխությունները և լրացումները կատարվում են գրավոր, և հանդիսանում են սույն պայմանագրի անբաժանելի մասը:

## 7. Կողմերի իրավաբանական հասցեները

*Հրատարակիչ*

«Էդիթ Պրինտ» ՍՊԸ
Ք.Երևան, Թումանյան 12 բն.3
ՀՎՀՀ 00009253
ՀՀ 16600 00243060100
«Պրոմեթեյ բանկ» ՍՊԸ

Տնօրեն Ա.Գալստյան

*Հեղինակ*

Նվեր Անդրանիկի Վիրաբյան
ք.Երևան,Ավանեսովի 6շ. բն 5
անձն. AK 0480412
տրված 08.04.2010թ. 009-ի կողմից

Հեղինակ Ն.Վիրաբյան

Հավելված 1
01. Մայիսի 2011թ.

| ՀՀ | Գրքի անվանումը |
|---|---|
| 1 | Գրականության քրեստոմատիա 7 |
| 2 | Գրականության քրեստոմատիա 8 |
| 3 | Գրականության քրեստոմատիա 9 |
| 4 | Գրականության քրեստոմատիա 10 |
| 5 | Գրականության քրեստոմատիա 11 մաս 1 |
| 6 | Գրականության քրեստոմատիա 11 մաս 2 |
| 7 | Գրականության քրեստոմատիա 12 |

*Պատվիրատու*

«Էդիթ Պրինտ» ՍՊԸ
Ք.Երևան, Թումանյան 12 բն.3
ՀՎՀՀ 00009253
ՀՀ 16600 00243060100
«Պրոմեթեյ բանկ» ՍՊԸ

Տնօրեն Ա.Գալստյան



*Հեղինակ*

Նվեր Անդրանիկի Վիրաբյան
ք.Երևան,Ավանեսովի 6շ. բն.5
անձն. AK 0480412
տրված 08.04.2010թ. 009-ի կողմից

Հեղինակ Ն.Վիրաբյան

«ՀԱՅՀԵՂԻՆԱԿ»
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ԿՈԼԵԿՏԻՎ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ԿԱՌԱՎԱՐՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

"ARMAUTHOR"
Non-governmental collective
management organization of
copyright and related rights

"АРМАВТОР"
Общественная организация по
коллективному управлению авторскими
и смежными правами

07/379
02.11.2015թ.

# ՏԵՂԵԿԱՆՔ
## ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՕԲՅԵԿՏԻ Ի ՊԱՀ ՀԱՆՁՆՈՒՄ

ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ ՀՈՄԲԵՐԹԻ
«ԷԴԻԹ ՊՐԻՆՏ» ՍՊԸ / տնօրեն/
ք. Երևան, Թումանյան 12 բն. 3
Հեռ. - 52-08-48, 56-08-41
Անձնագիր-AK 0311168, 001,09.06.2009թ.

ՀՀ «Հայհեղինակ» կազմակերպությունը տեղեկացնում է, որ «ԷԴԻԹ ՊՐԻՆՏ» ՍՊԸ -ի կողմից ներկայացված՝

1. «ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ» CD
2. «ԱՅԲԲԵՆԱՐԱՆ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆ» CD
3. «ԱՅԲԲԵՆԱՐԱՆ ԱՐԵՎԵԼԱՅԵՐԵՆ» CD
4. «Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ – ՀԵՔԻԱԹՆԵՐ -ՀԱՅԵՐԵՆ» CD

վերնագրով CD-ները ի պահ է վերցված կազմակերպությունում 2015թ. նոյեմբերի 2-ին **08/3720** թվի ներքո:

ՏՆՕՐԵՆ Ս. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Հայաստանի Հանրապետություն, 375009 Երևան, Կորյունի փող. 19ա Հեռ. 52 73.50, Հեռ/Ֆաքս. 52 94 92
Республика Армения, 375009 Ереван, ул. Корюна, 19а Тел. +374 1 52 73 50 Факс:+374 1 52 94 92
19a Koryun str., 375009 Yerevan, Republic of Armenia Tel.:+374 1 52 73 50 Tel/ Fax: +374 1 52 94 92
E-mail: info@armauthor.am